ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼ Հ. ՂԱԶԱՆՉՅԱՆԻՑ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Ա. Հովհաննիսյանի կողմից 27.04.22 թ.-ի թիվ 1-303 ներկայացրած գրությամբ խնդրել է Չարենցավան համայնքից՝ համայնքի վարչական տարածքով անցնող «Անվերջության ժապավեն» հուշարձանի տարածքում տեղադրված թվով երեք տեսախցիկներից մեկը, որը տեղադրվել է Չարենցավանի համայնքապետարանի կողմից, տրամադրել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ որպես նվիրատվություն՝ «Բջնի-ամրոց» պատմամշակութային արգելոցի տարածքում տեղադրելու համար: Տեսախցիկի հետ, որպես նվիրատվություն, անհրաժեշտ է տրամադրել նաև արևային էներգիայի համար անհրաժեշտ սարքավորումները: Ուստի առաջարկում եմ՝ ավագանու առաջիկա նիստի քննարկմանը ներկայացնել վերը նշված ՊՈԱԿ-ին տեսախցիկի և արևային էներգիայի համար անհրաժեշտ սարքավորումների նվիրատվության հարցը՝ «Բջնի-ամրոց» պատմամշակութային արգելոցի տարածքի պահպանումը ավելի արդյունավետ դարձնելու համար:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ *Հ. Ղազանչյան*

16.05.2022թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է «16» 05 2022թ.
Մուտք N 1986 Գործ N 21